

Հավելված
ՀՀ կառավարության 2022 թվականի
փետրվարի 17-ի N 192 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

2021 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՍԵՎԱՆԱ ԼՃԻՑ ԲԱՑ ԹՈՂՆՎՈՂ ՋՐԻ՝ 170 ՄԼՆ
ԽՈՐԱՆԱՐԴ ՄԵՏՐԸ ԳԵՐԱՋԱՆՑՈՂ ՉԱՓԱՔԱՆԱԿԻ ՀԱՇՎԻՆ ԱՐՏԱԴՐՎՈՂ
ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՎԱՃԱՌՔԻՑ «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ
ԿՈՐՊՈՐԱՑԻԱ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵ-
ՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՑՈՂ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ
ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են 2021 թվականի ընթացքում Սևանա լճից բաց թողնվող ջրի՝ 170 մլն խորանարդ մետրը գերազանցող չափաքանակի հաշվին արտադրվող էլեկտրական էներգիայի վաճառքից «Միջազգային էներգետիկ կորպորացիա» և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերություններում առաջացող լրացուցիչ գումարների (այսուհետ՝ լրացուցիչ գումարներ) հաշվարկման և վճարման կարգի հետ կապված հարաբերությունները:

2. Սևանա լճից 2021 թվականի ընթացքում բաց թողնվող ջրի՝ 170 մլն խորանարդ մետրը գերազանցող չափաքանակի հաշվին արտադրվող էլեկտրական էներգիայի վաճառքից՝

1) «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության մոտ առաջացող լրացուցիչ գումարը ($L_{\text{ՄԵԿ}}$) հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$L_{\text{ՄԵԿ}} = [(E_{\text{աղբյուր}} - E_{\text{աղբյուրող}}) \times U_{\text{ՄԵԿ}}] \times 0.82,$$

որտեղ՝

ա. $E_{\text{աղբյուր}}$ – «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության կողմից հաշվետու ժամանակահատվածում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանն առաքված էլեկտրական էներգիայի քանակն է (կՎտաժ),

բ. $E_{\text{աղբյուրող}}$ – հաշվետու ժամանակահատվածում «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության «Արգել», «Արգնի», «Քանաքեռ» և «Երևան-1» ՀԷԿ-երի կողմից կողային ջրերի հաշվին «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանն առաքված էլեկտրական էներգիայի քանակն է (կՎտաժ),

գ. ՄԴՄԷԿ - Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության համար երկդրույք սակագնային համակարգում սահմանված առաքվող էլեկտրաէներգիայի դրույքն է (դրամ/ կՎտժժ)՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունում առաջացող լրացուցիչ գումարը ($L_{ՀԷՑ}$) հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$L_{ՀԷՑ} = [(E_{առլր} - E_{առլրկող}) \times (M_{ՀրՁԷԿ} - M_{ՄԷԿ}) \times 0.82]$, որտեղ $M_{ՀրՁԷԿ}$ -ն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից «Հրազդան ՁԷԿ» կայանի համար երկդրույք սակագնային համակարգում սահմանված առաքվող էլեկտրաէներգիայի դրույքն է (դրամ/ կՎտժժ)՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն կարգի 2-րդ կետում նշված $E_{առլր}$ և $E_{առլրկող}$ մեծությունների վերաբերյալ տեղեկատվությունը «Միջազգային էներգետիկ կորպորացիա» և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերություններին տրամադրվում են «Հաշվարկային կենտրոն» և «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից:

4. Սույն կարգի 2-րդ կետի համաձայն «Միջազգային էներգետիկ կորպորացիա» և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերություններում հաշվարկված լրացուցիչ գումարները վճարվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչությունում բացված Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի անվամբ արտաբյուջետային հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Բ. ԲԱԴԱԼՅԱՆ